

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/10

3 մայիսի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վահե Խաչատրյանի 22.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.03.2016թ-ի թիվ 314406/04 որոշման դեմ:

Ա/Ձ Վահե Խաչատրյանի գանգատում բերված փաստարկները.

Համաձայն ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.03.2016թ-ի թիվ 314406/04 որոշման նշանակվել է վարչական տուգանք 20.000 դրամի չափով՝ 2015թ. 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը չներկայացնելու համար: Վերոնշյալ որոշման հետ Ա/Ձ Վահե Խաչատրյանը համաձայն չէ և խնդրում է այն անվավեր համարել, քանի որ ընդհանրապես շրջանառության հարկով հարկվող գործունեությամբ չի զբաղվել, իրականացրել է բացառապես արտոնագրային վճարով հարկվող գործունեություն, հանդիսացել է արտոնագրային վճար վճարող և հարկային տեսչություն ներկայացրել համապատասխան ժամանակաշրջանների համար արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություններ: Սակայն ոչ մի անգամ ՀՏ-ից չի ծանուցվել այն մասին, որ իրականացվող գործունեության համար պետք է ներկայացնի շրջանառության հարկի հաշվարկներ: Միաժամանակ, ՀՏ-ում գանգատաբերին պարզաբանել են, որ 2015թ-ի ընթացքում այլ գործունեություն սկսելու համար, որպեսզի հնարավորություն ունենա շրջանառության հարկով հարկվելու, մինչև պետական գրանցում ստանալու հաջորդող ամսվա 20-ը պետք է ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Այդ պատճառով իր կողմից ներկայացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու հայտարարությունը, սակայն որպես հարկ վճարող հաշվառվելու պահից (պետական ռեգիստրում որպես անհատ ձեռներեց պետական գրանցում է ստացել 06.05.2015թ-ին) շրջանառության հարկով հարկվող գործունեությամբ ընդհանրապես չի զբաղվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը գանգատաբերը խնդրում է չեղյալ համարել 11.03.2016թ-ի թիվ 314406/04 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 01.03.2016թ-ի 235/04 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Վահե Խաչատրյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով,

ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 11.03.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 314406/04 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Վահե Խաչատրյանի նկատմամբ վարչական տուգանք նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Վահե Խաչատրյանը 2015թ-ի ընթացքում շրջանառության հարկով հարկվող գործունեություն չի իրականացրել, այլ բացառապես զբաղվել է արտոնագրային վճարով հարկվող գործունեությամբ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008թ-ի սեպտեմբերի 30-ի թիվ 9 պաշտոնական պարզաբանման դրույթներով, որի 4-րդ կետի համաձայն՝ եթե հարկ վճարողը (կազմակերպության, անհատ ձեռնարկատեր, նոտար) փաստացի չի իրականացնում գործունեություն (այդ թվում նաև՝ չի հանդիսանում գործատու կամ հարկային գործակալ), ապա՝ այդ ժամանակահատվածում ներառվող՝ հարկատեսակների համար օրենքով սահմանված լրիվ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն հաշվետվություններ (այդ թվում՝ «գրոյական») չի ներկայացնում:

Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Վահե Խաչատրյանը 2015թ-ի ընթացքում շրջանառության հարկով հարկվող գործունեություն չիրականացնելու պայմաններում շրջանառության հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չի կրել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.03.2016թ-ի թիվ 314406/04 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ